ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/37» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Շիրակի մարզի Երերույք տաճարի փոքր դամբարանի վերականգնման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.04.2025թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Արմինե Ստեփանյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Աննա Խաչատրյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/37» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/37» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ	lev.ghukasyan@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	62241603	62200000	62200000

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

5.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.05.2025թ. ժամը 14:00-ին

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ Աննա Խաչատրյանը

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.2 **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին հետևյալ պատճառով.

Հաշվի առնելով, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/37» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման համար ՀՀ կառավարության 30.11.2023թ. N 2106-Ն որոշման պահանջներին համապատասխան անհրաժեշտ է ունենալ **քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 1-ին դասի լիցենզիա հետևյալ ներդիրով՝ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ - 03.04,** որոնց առկայության պահանջի մասին նշված էր հրավերի 1-ին մասի 2-րդ՝ «**Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնում**, գնահատող հանձնաժողովը ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական կայքէջում հրապարակված լիցենզավորված և կասեցված կազմակերպությունների ցանկն ուսումնասիրելով արձանագրել է, որ **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ն** չունի պահանջվող դասի լիցենզիան և համապատասխան ներդիրը: Հետևաբար **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի** հայտով ներկայացված, իր կողմից հաստատված N 1 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.3 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6.2 կետը՝ **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի** հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Գնահատման արդյունքների մասին.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7.2 Հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ հոդվածի 19-րդ և 29-րդ ենթակետերը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Հովսեփյան /նախագահ/

---------- Արմինե Ստեփանյան

---------- Սուրեն Շաքարյան

---------- Վերգինե Սահակյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/